# ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ

## ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

**Հունվարի 1-ին, կիրակի.—Կաղանդ, Տարեմուտ:**

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Թադեոս վրդ. Զիրեկյանցը:

Ս. պատարագին ներկա էր Կաթողիկոսական Տեղապահ Ամեն. Տ. Թորգոմ արքեպս. Մանուկյանը:

* * *

**Հունվարի 5-ին, հինգշաբթի.—Ճրագալոյց Ծննդեան և Աստուածայայտնութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:**

Այսօր Մայր տաճարում, երեկոյան ժամերգությունից հետո, ս. պատարագ մատուցեց Մայր Աթոռի դիվանապետ գերշ. Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը և «Հայր մեր»-ից առաջ հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Ս. պատարագին ներկա էր Կաթողիկոսական Տեղապահ Ամեն. Տ. Թորգոմ արքեպս. Մանուկյանը:

* * *

**Հունվարի 6-ին, ուրբաթ.—ՏՕՆ ԾՆՆԴԵԱՆ ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ:**

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, հանդիսավոր ս. պատարագ մատուցեց Երուսաղեմի հայոց Պատրիարք և Կաթողիկոսական Տեղապահ Ամեն. Տ. Թորգոմ արքեպս. Մանուկյանը և Զորհներից առաջ հավուր պատշաճի քարոզ խոսեց (Տե՛ս էջ 9):

* * *

**Հունվարի 7-ին, շաբաթ.**—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Եղիշե ավ. քհն. Բաղրամյանը:

Հավարտ ս. պատարագի կատարվեց հոգեհանգստյան պաշտոն՝ վասն համորեն ննջեցելոց:

*
* *

**Հունվարի 8-ին, կիրակի.**—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Ստեփանոս քհն. Մելիքյանը:

*
* *

**Հունվարի 13-ին, ուրբաթ.—Տոն Անուանակոչութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:**

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. խորանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Խաչատուր ավ. քհն. Փրանկյանը:

*
* *

**Հունվարի 14-ին, շաբաթ.—Տօն ծննդեան Ս. Յովհաննու Կարապետին:**
Այսօր Մայր տաճարում, Հովհաննես Մկրտչի ս. խորանում, ս. պատարագ մատուցեց Տ. Արտակ ավ. քհն. Սիմոնյանը:

*
* *

**Հունվարի 15-ին, կիրակի.**—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Խորեն քհն. Մարուքյանը:
Հավարտ ս. պատարագի կատարվեց հոգեհանգստյան պաշտոն:

*
* *

**Հունվարի 21-ին, շաբաթ.—Սրբոց Հայրապետացն Աթանասի և Կիւրղի:**
Այսօր Ս. Շողակաթ եկեղեցում ս. պատարագ մատուցեց Տ. Միքայել ծ. վրդ. Աջապահյանը և «Հայր մեր»-ից առաջ հավուր պատշաճի քարոզ խոսեց:

*
* *

**Հունվարի 22-ին, կիրակի.**—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. խորանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Միքայել ծ. վրդ. Աջապահյանը և «Հայր մեր»-ից առաջ հանգամանալից քարոզ խոսեց:
Հավարտ ս. պատարագի կատարվեց հոգեհանգստյան պաշտոն:

*
* *

**Հունվարի 28-ին, շաբաթ.—Սրբոյն Գրիգորի աստուածաբանին:**
Այսօր Ս. Աստվածածին եկեղեցում ս. պատարագ մատուցեց Տ. Շիրայր քհն. Գըլըճյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց:
Հավարտ ս. պատարագի կատարվեց հոգեհանգստյան պաշտոն:

*
* *

**Հունվարի 29-ին, կիրակի.**—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. խորանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Թադեոս վրդ. Զիրեկյանը:
Հավարտ ս. պատարագի կատարվեց հոգեհանգստյան պաշտոն: